

**Վիճակագրական արտադրանք – Սպառողական գների ինդեքս (ամսական)**

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
<i>Կարիքների ձևակերպում</i>		
	1.1 Կարիքների բացահայտում	<p>ՍԳԻ-ն գների ինդեքսներից միակն է, որը օգտագործվում է երկրներում որպես գնաճի ցուցանիշի փոխարինող, քանզի այն ապահովում է գնաճի տիրույթին վերաբերվող նվազագույն պահանջները՝ յուրաժամանակությունը (օպերատիվությունը), սպառման ոլորտի առավել ընդգրկունությունը և զգայունակությունը (սենսիտիվությունը):</p> <p>ՍԳԻ-ն հանդիսանում է մակրոտնտեսական կարևորագույն ցուցանիշներից մեկը, որը պետական մարմինների կողմից օգտագործվում է դրամավարկային և ֆինանսական քաղաքականության մշակման և իրագործման, տնտեսության մեջ գնաճային գործոնների վերլուծության, կանխատեսման և զսպման, առանձին իրավաբանական վիճաբանություններ լուծելու համար և այլն:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում ՍԳԻ-ն հանդիսանում է գնաճը բնութագրող միակ ցուցանիշը:</p>
	1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում	<p>Սպառողական գների դիտարկումներն և ինդեքսի հաշվարկներն իրականացվում են ըստ Արմստատի տարեկան վիճակագրական ծրագրի, որը յուրաքանչյուր տարի հաստատվում է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից և հնգամյա վիճակագրական ծրագրի (հաստատվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից) շրջանակներում:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսի հաշվարկը կատարվում է սկսած 1993թ. հունվարից: Ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակվել է Արժույթի Միջազգային Հիմնադրամի հետ համատեղ և ամբողջությամբ համապատասխանում է միջազգային չափանիշներին:</p>

		<p>Մշակված մեթոդաբանության՝ տեղեկատվական աղբյուրների ընտրության, տեղեկատվության հավաքման, հաշվարկների կատարման, էլքային ցուցանիշների հրապարակման և պահպանման հիմքում ընկած դրույթները և գործողությունների կարգը համապատասխանեցված են և իրագործվում են ըստ միջազգային 6 հեղինակավոր և լիազորված կազմակերպությունների (Աշխատանքի միջազգային գրասենյակ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Եվրոպական համայնքների վիճակագրական գրասենյակ (Եվրոստատ), Միավորված ազգերի կազմակերպություն և Համաշխարհային բանկ) կողմից մշակված Սպառողական գների ինդեքսի ձեռնարկի (Consumer price index manual, Theory and practice. 2004):</p> <p>1993 թվականից առ այսօր Արմստատ են այցելել Միջազգային Արժույթային Հիմնադրամի տարբեր հանձնախմբեր գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործման, ՀՀ ՍԳԻ-ի որակի ստուգման նպատակով:</p> <p>2008թ. ապրիլի 13 -ից 25-ը - մեթատվյալների ներկայացում համաձայն SDDS համակարգի, - DQAF համակարգին առնչվող հարցեր</p>
	<p>1.3 Արտադրանքի նպատակների սահմանում</p>	<p>ՍԳԻ-ի կազմման և հաշվարկման նպատակն է որոշել ՀՀ սպառողական շուկայում առկա գների մակարդակի փոփոխության չափը ժամանակի և տարածության մեջ: Իրականացնել ՀՀ ՍԳԻ-ի ցուցանիշների համեմատություն այլ երկրների ՍԳԻ-իների հետ նույն ժամանակահատվածների համար:</p>
	<p>1.4 Հասկացությունների որոշում</p>	<p>ՍԳԻ-ի հաշվարկներում ընդգրկված են բոլոր տեսակի տնային տնտեսությունները, անկախ իրենց եկամտի չափից:</p> <p>Ապրանքների և ծառայությունների տեսակների ընտրման գործընթացն իրականացվում է հիմնվելով տնային տնտեսությունների հետազոտության ծախսումների մասին ստացված տվյալների վրա՝ ընտրելով դրանցից առավել մեծ սպառում ունեցող ապրանքներ և ծառայություններ:</p> <p>Ապրանքների և ծառայությունների ցանկի արդիականացման նկատառումով պարբերաբար իրականացվում են դիտարկվող կետերի</p>

		ուսումնասիրություններ, տրվում են փորձագիտական գնահատումներ:
	1.5 Տվյալների առկայության ստուգում	Գների դիտարկումներն իրականացվում են գնադիտարկող մասնագետների (վիճակագրերի) կողմից անմիջական այցելությամբ դիտարկման համար ընտրված համապատասխան առևտրի (ծառայության) օբյեկտներ և արձանագրվում են գնապիտակների կամ գնացուցակների վրա տպագրված գները: Դիտարկման բազային օբյեկտներում վիճակագրերը գների արձանագրման համար կարող են կատարել որոշակի գործողություններ (զանազան չափումներ, կշռումներ և այլն) մեկ միավոր գնի ճիշտ որոշման և գրանցման համար: Դիտարկված գներն արձանագրվում են ձեռքի համակարգիչների միջոցով: Որոշ ծառայությունների սակագների հավաքումը, որոնք հաստատագրված են ամբողջ հանրապետության համար, ինչպիսիք են օրինակ հեռահաղորդակցության, էլեկտրաէներգիայի, գազի և այլ ծառայությունների սակագները, իրականացվում է կենտրոնացված կարգով՝ ՄԳԻ-ի հաշվարկի համար պատասխանատու վերը նշված Արմատատի բաժնում:
	1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում	Մինչ ՀՀ ՄԳԻ-ի հաշվարկման մշակումը, ինչպես նաև նախատեսվող փոփոխությունները ՀՀ ՎՊԽ կողմից անհատական որոշմամբ հաստատումը, իրականացվում է դրանում ներառված ցուցանիշների և դրանց վերաբերյալ լրացման հրահանգի մասով աշխատանքային քննարկումներ տարբեր շահագրգիռ մարմինների, գիտական կազմակերպությունների, օգտագործողների հետ, ինչպես նաև հաշվի է առնվում միջազգային փորձագետների կարծիքը: Ուսումնասիրվում է այլ պետությունների և տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող հետազոտությունների հարցաշարերը:
	<i>Նախագծում</i>	
	2.1 Արդյունքների նախագծում	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
	2.2 Փոփոխականների	Գներ. Ապրանքների և ծառայությունների

<p>նկարագրությունների նախագծում</p>	<p>սպառողական (մանրածախ) գները, որոնցով հաշվարկվում են ինդեքսները: Ինդեքսներ. Ջուտ գնային փոփոխությունը արտացոլող ցուցանիշներ: Տարրական ինդեքսների կշիռներ. Կշիռներ, որոնք օգտագործվում են որպես տարրական ինդեքսների կշիռներ՝ ենթախմբերի ինդեքսներ կազմելու, ինչպես նաև դրանց ագրեգացման մեթոդով ընդհանուր սպառողական գների ինդեքս ստանալու համար: Կիրառվող դասակարգիչ՝ «Անհատական սպառման դասակարգիչ՝ ըստ նպատակների» (COICOP) (ՀՀ Էկոնոմիկայի նախարարի N 876-Ն 19.09.2013թ. հրաման, ՀՀ ՊՏ 01.07.2014թ. 15/ (494))):</p>
<p>2.3 Տվյալների հավաքման նախագծում</p>	<p>Սպառողական գների և ծառայությունների սակագների դիտարկումն իրականացվում է ընտրանքային կարգով: Գների և սակագների դիտարկումը սպառողական շուկայում և սպառողական գների և գների ինդեքսների հաշվարկն անց է կացվում աշխատանքային մի քանի փուլերով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ սպրանքների և ծառայությունների գների և սակագների դիտարկման համար բնակավայրերի ընտրանք,</li> <li>✓ բազային առևտրի և ծառայություններ մատուցող կազմակերպությունների (որտեղ պետք է կազմակերպվեն դիտարկումները) ընտրանք,</li> <li>✓ դիտարկման համար սպրանք (ծառայություն)-ներկայացուցիչների ընտրանք,</li> <li>✓ գների և սակագների դիտարկում,</li> <li>✓ միջին գների (սակագների) հաշվարկ,</li> <li>✓ ՄԳԻ-ի գամբյուղի կշիռների ձևավորում և հաշվարկ,</li> <li>✓ Սպառողական գների ինդեքսի հաշվարկ:</li> </ul>
<p>2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում</p>	<p>ՄԳԻ-ի ընդգրկունությունը կարելի է տարանջատել 2 հիմնական խմբերի՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- աշխարհագրական ընդգրկունություն</li> <li>- տվյալների ընդգրկունություն:</li> </ul> <p>ՀՀ սպառողական սպրանքների (ծառայությունների) գների (սակագների) ամենամսյա դիտարկումներն ըստ սահմանված մեթոդաբանության, իրականացվում են քաղաքային բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանում և հանրապետության 10</p>

		<p>քաղաքներում, որոնք ներկայացնում են ՀՀ բոլոր 10 մարզերը:</p> <p>Դիտարկման կետերը (անկախ իրենց գործունեության տեսակից) ընտրվում են ապրանքաշրջանառության և ծառայությունների ծավալների հիման վրա, որոնք տրամադրվում են վիճակագրական ճյուղային բաժինների կողմից, ինչպես նաև կիրառելով այլ մեթոդներ:</p> <p>ՄԳԻ-ի ապրանքների և ծառայությունների զամբյուղի կշիռների ձևավորման համար անհրաժեշտ ցուցանիշները ստացվում են առաջնահերթ՝ հիմնվելով Արմատատի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքում ստացված տնային տնտեսությունների ծախսումների մասին տվյալների հիման վրա:</p>
	2.5 Մշակման և վերլուծության նախագծում	<p>Տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշներն ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, որոնց հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տեղեկատվություն ներկայացնող համապատասխան հարցազրուցավարների կամ անմիջապես տնային տնտեսությունների հետ կապ հաստատելու միջոցով, իրականացվում են համապատասխան ճշգրտումներ:</p>
	2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում	<p>Տեղեկատվության հավաքումից մինչև դրա հրապարակումն իրականացվող բոլոր գործընթացների մասով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես կապված առևտրի և ծառայության օբյեկտների ընտրանքից և դրանցում դիտարկումների կազմակերպման իրազեկումից, դիտարկող մասնագետների հրահանգավորումը և տեստավորումը, աշխատակիցներին անհրաժեշտ մասնագիտական դասընթացների միջոցով վերապատրաստելու և այլնի հետ:</p>
	<i>Կառուցում</i>	
	3.1 Հավաքման գործիքի կառուցում	<p>Գին դիտարկող մասնագետներին տրամադրվում են դիտարկման համար ընտրված ապրանքների և ծառայությունների ընդհանրացված բնութագրերը: Արձանագրված գները մուտքագրվում են համապատասխան էլեկտրոնային աղյուսակներում:</p>
	3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ	<p>Առկա են տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման ծրագրային փաթեթում</p>

	ամրապնդում	(Microsoft Office EXEL) առկա է մուտքագրված տվյալների թվաբանական ու տրամաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ՝ ինդեքսների ագրեգացման, պատմական շարքերի կառուցման համար անհրաժեշտ փաթեթներ:
	3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ՝ համաձայն տարեկան վիճակագրական ծրագրի:
	3.4 Գործընթացների կարգավորում	<p>Վիճակագրական արտադրանքի ստացումն իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. տեղեկատվության հավաքում,</li> <li>2. թվաբանական և տրամաբանական ստուգումներ և ճշգրտումներ,</li> <li>3. տեղեկատվության մուտքագրում և ստուգաճշտում նախապես մշակված համակարգչային մուտքագրման ծրագրի միջոցով (Microsoft Office Excel ծրագրային փաթեթ),</li> <li>4. ստացված գնային տեղեկատվության վերլուծում, հարցերի պարզաբանում</li> <li>5. ինդեքսների հաշվարկ,</li> <li>6. մամլո հաղորդակցության պատրաստում,</li> <li>7. տեղեկատվության տարածում՝ համացանցում տեղադրում, ինչպես նաև թղթային, տեղեկատվության տրամադրում էլեկտրոնային աղյուսակների միջոցով,</li> <li>8. ճյուղային բաժիններին համապատասխան ինդեքսներով ապահովում:</li> </ol>
	3.5 Արտադրության համակարգի փորձարկում	Իրականացվում է դիտարկվող ապրանք-ծառայությունների ցանկի պարբերաբար արդիականացում, ինչպես նաև գնային ցուցանիշների մուտքագրման ծրագրային փաթեթի վերանայում: Ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև ծրագրային փաթեթների վերակազմակերպում, զարգացում, սեզոնային ապրանքների գների հաշվարկման համար Macros ծրագրի վերանայում:
	3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում	Նոր ապրանքների ներդրումը ՄԳԻ-ի ցանկում իրականացվում է կշիռների փոփոխության պայմաններում, նախապես ուսումնասիրելով դրանց գները սպառողական շուկայում, առանց ներգրավելու դրանց փոփոխություններն ինդեքսների հաշվարկներում:

		Նմանատիպ փորձնական դիտարկումների գործընթաց է իրականացվում դիտարկվող բնակավայրի փոփոխման, կամ ներառման պարագայում, ինչպես նաև նոր առևտրի կամ ծառայության օբյեկտ ներգրավելու կամ փակվածը նորով փոփոխելու պայմաններում:
	3.7 Արտադրության համակարգի վերջնականացում	Մտացված գնային տեղեկատվության հիման վրա հաշվարկվում են ամսական ինդեքսներ ըստ հանրապետության մարզերի և ընդամենը ՀՀ-յան: Հաշվարկվում են նաև մի շարք ինդեքսներ տարբեր ժամանակահատվածների համեմատ (բազիսային, նախորդ տարվա կուտակային և այլն):
	<i>Հավաքում</i>	
	4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում	Արմատատի տնային տնտեսությունների հետազոտության բաժինը Արմատատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնին տրամադրում է հետազոտված տնային տնտեսությունների կողմից սպառված ապրանքների և ծառայությունների ցանկը: Ճշգրտվում է յուրաքանչյուր ապրանքախմբի մեջ մտնող ապրանքների և ծառայությունների կազմն և կառուցվածքն իրենց ծախսերով, այնուհետև ընտրվում են այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք բնակչության կողմից տվյալ ժամանակահատվածում ունեցել են լայն սպառում: Իրականացվում է նպատակային ընտրանք ըստ սպառման ծավալների մեծության:
	4.2 Հավաքման կազմակերպում	Վիճակագրական տեղեկատվության հավաքման կազմակերպման համար իրականացվում է դիտարկման ենթակա նախապես ընտրված հայտնի տնային տնտեսությունների քանակին համապատասխան հարցաթերթերի, օրագրերի և ըստ անհրաժեշտության դրա լրացման հրահանգի տպագրության պատվերի ձևավորում, դրանց տպագրություն և բաշխում համապատասխան հարցազրուցավարների: Միաժամանակ հարցաթերթի և օրագրի ձևը հասանելի է նաև Արմատատի պաշտոնական կայքում: Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների պատասխանատու աշխատակիցներն ունեն համապատասխան գիտելիքներ և հմտություններ վիճակագրական տեղեկատվության հավաքման գործընթացի կազմակերպման համար:
	4.3 Հավաքման իրականացում	Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է ինչպես Արմատատի, մարզային

		վարչությունների, այնպես էլ Արմատատի կենտրոնական ապարատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման միջոցով (բջջային կապի, էլեկտրաէներգիայի, գազի և այլնի սակագները):
	4.4 Հավաքման վերջնականացում	Ապրանքի գինը, կամ ծառայության սակագինը, ինչպես նաև դրանց համառոտ բնութագիրը և դիտարկված չափի միավորը արձանագրվում է համապատասխան ձեռքի համակարգիչներում: Հավաքված տեղեկատվությունը թվաբանական և տրամաբանական ստուգաճշտման ենթարկվելուց հետո մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումն իրականացվում է մեխանիկական մուտքագրման եղանակով և հետագա արխիվացմամբ:
	<i>Մշակում</i>	
	5.1 Տվյալների ինտեգրում	Արմատատի մարզային վարչություններից ստացվող տեղեկատվությունը տեղակայվում է համապատասխան փաթեթներում, ինչից հետո դրանք համեմատվում են միմյանց հետ համապատասխան էլեկտրոնային աղյուսակներում: Դրանց հիման վրա հաշվարկվում են ՀՀ մարզերի սպառողական գների ինդեքսներ: Օգտագործելով մարզերի տեսակարար կշիռները ստացվում է ՀՀ ՄԳԻ-ին:
	5.2 Դասակարգում և կոդավորում	Ապրանքների և ծառայությունների դասակարգումն և դրանց համապատասխան կոդավորումն իրականացվում է օգտագործելով «Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգչի» (ԱՍԸՆԴ) ազգային տարբերակը:
	5.3 Վերանայում և հաստատում	ՀՀ մարզային վարչությունից ստացված գնային տեղեկատվությունը ենթարկվում է վերլուծության, յուրաքանչյուր ապրանքի և ծառայության գների փոփոխությունները մարզերում համեմատվում են միմյանց հետ, և հարցերի դեպքում ենթարկվում են լրացուցիչ գնադիտարկման:
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	Բացակայող ապրանքների և ծառայությունների գների և սակագների համար կիրառվում են իմպուտացիոն տարբեր մեթոդներ, օրինակ՝ տեղադրվում են համապատասխան խմբի գների միջին փոփոխությունների ցուցանիշը:
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	Ապրանքատեսակի կամ ծառայության տեսակի սպառողական շուկայից անհետանալու ժամանակ, կիրառելով համապատասխան մեթոդաբանություն, դրանք փոխարինվում են նույն անվանմամբ և



		<p>որակական հատկանիշներով մեկ այլ տեսակով: Բացառապես նոր անվանմամբ ապրանքատեսակ կամ բնակչությանը մատուցված ծառայություն, որը կունենա համապատասխան տեսակարար կշիռ ՄԳԻ-ի գամբյուղում, ներառվում է ՄԳԻ-ի կազմում, միայն գամբյուղի վերանայման՝ վերահաշվարկման ժամանակ:</p> <p>Եթե տվյալ բնակավայրում առևտրի կամ ծառայության համեմատաբար մեծ օբյեկտ է ի հայտ եկել, ապա գին դիտարկող մասնագետը՝ խորհրդակցելով Արմստատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի հետ, այն ներառում է դիտարկվող օբյեկտների ցանկում՝ դիտարկվող բազային օբյեկտներից համեմատաբար ոչ այդքան ներկայացուցչական առևտրի (ծառայության) կետի փոխարեն:</p>
	<p>5.6 Կշիռների հաշվարկում</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Կշիռների ձևավորման գործընթացն իրականացվում է հետևյալ փուլերով՝</li> <li>2. Արմստատի տնային տնտեսությունների վիճակագրության բաժինը Արմստատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնին տրամադրում է հետազոտված տնային տնտեսությունների կողմից սպառված ապրանքների և ծառայությունների ցանկը,</li> <li>3. Ճշգրտվում է յուրաքանչյուր ապրանքախմբի մեջ մտնող ապրանքների և ծառայությունների կազմը և կառուցվածքն իրենց ծախսերով, այնուհետև ընտրվում են այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք բնակչության կողմից տվյալ ժամանակահատվածում ունեցել են լայն սպառում,</li> <li>4. հիմնվելով տնային տնտեսությունների կողմից ապրանքների (ծառայությունների) ձեռք բերման (գնման) համար կատարված միայն դրամային ծախսերի մասով տվյալների վրա, հաշվարկվում է յուրաքանչյուր ապրանքի (ծառայության) տեսակարար կշիռն ընդհանուր սպառողական գամբյուղում:</li> </ol> <p>Մարզերի կշիռները ձևավորվում են հետևյալ վիճակագրական ցուցանիշների հիման վրա՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ապրանքաշրջանառության ծավալ,</li> <li>2. մատուցված վճարովի ծառայությունների ծավալ,</li> <li>3. բնակչության թվաքանակ:</li> </ol>
	<p>5.7 Ագրեգատների</p>	<p>ՄԳԻ-ի հաշվարկներում տարրական ագրեգատներ</p>

	<p>հաշվարկում</p>	<p>են համարվում բոլոր ապրանք-ծառայությունները, որոնցից կազմված է սպառողական գների ինդեքսի գամբյուղը, կամ ՄԳԻ-ի հավաքակազմում:</p> <p>Տարրական ապրանքի (ծառայության) գինը ձևավորվում է բոլոր այն գնային ցուցանիշներից, որոնք արձանագրվել են տվյալ ժամանակահատվածում կոնկրետ ապրանքի կամ ծառայության համար:</p> <p>Տարրական ագրեգատների կամ անհատական գների ինդեքսների և սպառողական ծախսումների հիման վրա հաշվարկված ապրանքների և ծառայությունների համապատասխան տեսակարար կշիռների միջին թվաբանական կշռված մեծությունների արդյունքում ստանում ենք ԱՍԸՆ դասակարգչի համապատասխան սպառողական ապրանքների և ծառայությունների զանազան խմբավորումների ագրեգացված գների ինդեքսներ՝ ենթադասերի, դասերի, հատվածների համար և ընդամենը ՄԳԻ: Ագրեգացման նման մեթոդով ստացվում են նաև բոլոր անհրաժեշտ այլ խմբավորումների ինդեքսները:</p>
	<p>5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում</p>	<p>Յուրաքանչյուր ամիս ստացված գնային տվյալների հիման վրա իրականացվում է ինդեքսների հաշվարկ համապատասխան ծրագրային փաթեթներով նախորդ ամսվա համեմատ: Օգտագործելով ամսական փոփոխությունները շղթայական եղանակով ստացվում են տարբեր ժամանակաշրջանների համեմատ ինդեքսներ՝ բազիսային, նախորդ տարվա համապատասխան ամսվա, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի և այլ անհրաժեշտ ժամանակահատվածների համեմատ: Կառուցվում են գների դինամիկ փոփոխությունների համապատասխան պատմական շարքերը:</p>
<p><i>Վերլուծություն</i></p>		
	<p>6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում</p>	<p>Սպառողական գների ինդեքսների ամսական հաշվարկները իրականացնելուց հետո, կատարվում են ամփոփ տվյալների համառոտ ներկայացման նախապատրաստումը: Դրանց համառոտ հրապարակում իրականացվում է յուրաքանչյուր հաշվետու ամսից հետո հինգերորդ աշխատանքային օրը Արմաստատի պաշտոնական կայքում:</p>
	<p>6.2 Արդյունքների վավերացում</p>	<p>Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն</p>

		նախապես սահմանված դասակարգումների, մեթոդաբանական ուղեցույցների և Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից տրամադրված ծրագրերի:
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	Ամփոփ ցուցանիշների հաշվարկելուց հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով տարբեր սոցիալ-տնտեսական երևույթների ազդեցության գնահատականները համապատասխան ամփոփ ցուցանիշների վրա:
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է դրանց զերծ լինելը անհատական (անվանական) տեղեկություններից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի» և 2001 թվականի հունիսի 25-ի «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ N 53 որոշման (տես՝ <a href="http://www.armstat.am/file/doc/99454478.pdf">http://www.armstat.am/file/doc/99454478.pdf</a> հղումը):
	6.5 Արդյունքների վերջնականացում	Մինչ ամփոփ տեղեկատվության տարածումն իրականացվում է դիտարկված գների և դրանց հիման վրա հաշվարկված ինդեքսների վերլուծություն ըստ դրանց պատմական և դինամիկ շարքերի, կատարվում է համեմատություն սեզոնային ապրանքների նախորդ տարիներին նույն ժամանակահատվածում արձանագրված գնային մակարդակների միջև:
<i>Տարածում</i>		
	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	Իրականացվում են հրապարակման ենթակա վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան աղյուսակների պատրաստում և վերջնական ճշգրտման աշխատանքներ, ինչպես նաև կատարվում է դինամիկ շարքերի արդիականացում: Անհրաժեշտության դեպքում նաև փոփոխություններ և/կամ լրացումներ են կատարվում համապատասխան ցուցանիշի հասկացություններում և մեթոդաբանական պարզաբանումներում:
	7.2 Տարածման արտադրանքների արտադրում	Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին: Տարեկան հրապարակումներ

		<ul style="list-style-type: none"> <li>• «Հայաստանի վիճակագրական տարեգիրքը» հասանելի է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:</li> <li>• «Հայաստանի մարզերը և Երևանը թվերով» վիճակագրական ժողովածուն հասանելի է հայերեն, անգլերեն լեզուներով:</li> <li>• «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածուն հասանելի է հայերեն, անգլերեն լեզուներով:</li> <li>• «Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուն հասանելի է հայերեն, անգլերեն լեզուներով: Նորությունների հրապարակումներ`</li> <li>• Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ներկա տվյալները, որոնք բնութագրում են Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը, հասանելի է հայերեն լեզվով: Մամուլի հաղորդագրություն` «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում», յուրաքանչյուր ամիս, հասանելի է հայերեն լեզվով: Ամսական ժողովածու</li> <li>• «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» ամսական տեղեկատվական զեկույցը հասանելի է հայերեն, ռուսերեն լեզուներով:</li> <li>• «ՀՀ Սպառողական գների ինդեքսը» վիճակագրական ամսական տեղեկագիրը հասանելի է հայերեն լեզվով: Եռամսյակային ժողովածու</li> <li>• «Աղքատություն և պարենային անվտանգություն» վիճակագրական ժողովածուն հասանելի է հայերեն և անգլերեն լեզուներով: Ինտերնետային հասցե. Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), անգլերեն և ռուսերեն լեզուներով հետևյալ կայքում` <a href="http://www.armstat.am/am/?nid=82">http://www.armstat.am/am/?nid=82</a> ՍԳԻ-ի ամսական և պատմական ցուցանիշները հասանելի են հետևյալ կայքում` <a href="https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&amp;rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&amp;rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</a>:</li> </ul>
	7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում	Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի:
	7.4 Տարածման արտադրանքների խթանում	Տարածման արտադրանքների տրամադրում: Գործիքների օգտագործում օգտագործողների հետ հաղորդակցությունը կառավարելու համար: Կայքի, ֆեյսբուքի և այլ միջոցների օգտագործում:

<p>7.5 Օգտագործողների աջակցության կառավարում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից չիրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:</p>
<p><i>Գնահատում</i></p>	
<p>8.1 Գնահատման միջոցների հավաքում</p>	<p>ՄԳԻ-ի անուղակի գնահատման համար հիմք են հանդիսանում տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության դրամական ծախսերի մասին ցուցանիշները, ճյուղային բաժիններից ստացված տվյալները, արդյունաբերողների կողմից արտադրվաող հանրապետության ներսում իրացվող արտադրատեսակների գների, գյուղատնտեսական տնտեսությունների կողմից իրացված գյուղմթերքի գների, կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆինանսական ծառայությունների տեսակարար կշիռների մասին տվյալները և այլն:</p>
<p>8.2 Գնահատման իրականացում</p>	<p>ՄԳԻ-ի ազրեզացման համար օգտագործվող խոշորացված խմբերի հաշվարկված կշիռները, որոնք ճշգրտվել են համապատասխան ճյուղային բաժիններից ստացված տվյալների, համեմատվում են տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության դրամական ծախսերի մասին համանման խմբավորումների ցուցանիշների հետ:</p> <p>Հանրապետության սպառողական շուկայում արձանագրված գների մակարդակը ըստ դիտարկման քաղաքների, ինչպես նաև դրանցով հաշվարկված փոփոխությունների միտումները համեմատվում են միմյանց հետ:</p>
<p>8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում</p>	<p>Համեմատվող միևնույն ցուցանիշի վերաբերյալ, տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության միջև անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում իրականացվում է դրանց հնարավոր պատճառների բացահայտում, որի հիման վրա իրականացվում են համապատասխան վերջնական ճշգրտման աշխատանքներ:</p>